ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

29 նոյեմբերի 2018թ. N 152

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Գետաշեն համայնքի ավագանու՝ 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 11 նիստի որոշումները:

Առդիր 12 էջ:

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 119.16/22135-Ղ
30 11 2018 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2018թ. N 41

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել համայնքի ավագանու թիվ 11 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

	Կողմ ( )	Դեմ ( )	Ձեռնպահ ( )
Վ.Խաչատրյան			
Հ. Դավթյան			
Գ. Կոստանյան			
Պ. Հովակիմյան			
Մ. Մուրադյան			
Մն. Մուրադյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Հովհաննիսյան

2018 թվականի 23 Նոյեմբերի

գ.Գետաշեն

Ժամը 12:40

Հավելված
Գետաշեն համայնքի ավագանու
23.11. 2018թ. N 41 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

41. Ավագանու N 11 նիստի օրակարգի հաստատելու մասին (Զեկ. աշխատակազմի քարտուղար Իսահակյան Վ.)

42. Գետաշեն գյուղական համայնքի ղեկավարի դրույքաչափը հաստատելու մասին: (Զեկ. համայնքի ղեկավար՝ Հովհաննիսյան Գ.)

43. Գետաշեն գյուղական համայնքի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը հաստատելու մասին: (Զեկ. համայնքի ղեկավար՝ Հովհաննիսյան Գ.)

44-Ն. Գետաշեն համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2019 թվականի դրույքաչափերի մասին: (Զեկ. համայնքի ղեկավար՝ Հովհաննիսյան Գ.)

45- Ն. Գետաշեն համայնքի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի ,Գետաշեն համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասինե թիվ 37 - Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Զեկ. համայնքի ղեկավար՝ Հովհաննիսյան Գ.)

46. Գետաշեն համայնքի որոշ ընտանիքների սոցօգնություն տրամադրելու մասին: (Զեկ. համայնքի ղեկավար՝ Հովհաննիսյան Գ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2018թ. *N 42*

ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գետաշեն համայնքի ղեկավարի աշխատավարձը չափը սահմանել 216 000 (երկու հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

	Կողմ ( )	*Դեմ ( )*	*Ձեռնպահ ( )*
Վ.Խաչատրյան			
Հ. Դավթյան			
Գ. Կոստանյան			
Պ. Հովակիմյան			
Մ. Մուրադյան			
Մն. Մուրադյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Հովհաննիսյան

2018 թվականի 23 Նոյեմբերի

գ.Գետաշեն

Ժամը 12:40

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

_23 նոյեմբերի 2018թ. N 43

ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Գետաշենի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը 2019 թվականի համար համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

	Կողմ ( )	*Դեմ ( )*	*Չեռնպահ ( )*
Վ.Խաչատրյան			
Հ. Դավթյան			
Գ. Կոստանյան			
Պ. Հովակիմյան			
Մ. Մուրադյան			
Մն. Մուրադյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Հովհաննիսյան

2018 թվականի 23 Նոյեմբերի

գ.Գետաշեն

Ժամը 12:40

Հավելված
Գետաշեն համայնքի ավագանու
23.11. 2018թ. N 43 որոշման

ԳԵՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 18:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հ/հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը
1	Համայնքի ղեկավար	1	216.000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	163.000
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
1	Աշխատակազմի քարտուղար	1	140.000
2	Առաջատար մասնագետ	1	130.000
3	Առաջատար մասնագետ	1	130.000
4	Առաջին կարգի մասնագետ	1	85.000
5	Առաջին կարգի մասնագետ	1	85.000
6	երկրորդ կարգի մասնագետ	1	83.000
7	երկրորդ կարգի մասնագետ	1	83.000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
1	Հավաքարար	1	73.000
2	Պահակ	1	73.000
3	Էլեկտրիկ	1	73.000
4	Հակակարկտային կայանների պահակ	1	102.000
5	Անասնաբույժ	1	73.000
1	Մշակույթի տան տնօրեն	1	73.000
2	Մշ.տան այգեպան	1	73.000
3	Գրադարանի վարիչ	1	73.000
4	Մշակույթի տան գեղմասվար	1	80.000
	ԸՆԴԱՄԵՆԸ՝		1.808.000

Գետաշեն համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

23 նոյեմբերի 20118թ. *N 44-Ն*

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Գետաշեն գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2019 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ՝

	Կողմ ( )	Դեմ ( )	Ձեռնպահ ( )
Վ.Խաչատրյան			
Հ. Դավթյան			
Գ. Կոստանյան			
Պ. Հովակիմյան			
Մ. Մուրադյան			
Մն. Մուրադյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. Հովհաննիսյան

2018 թվականի նոյեմբերի 23
Գ.Գետաշեն
Ժամը 12:40

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 44-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքեր և շինություններ /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական շենքերի և շինությունների համար՝

   1. մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակակա և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

   2.1-ին կետով չնախատեսված հիմնական շենքերի և շինությունների համար՝

   ա/201-ից 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

   բ/1-ին կետով չնախատեսված շենքերի և շինությունների համար 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

   գ/ 1-ին կետով չնախատեսված հիմնական շենքերի և շինությունների համար 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

   Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

   3. մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.

   4. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլատվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

   1. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության 1000 /հազար/ դրամ.

   2. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ

շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 /երկու հազար/ դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝
   1. Համայնքի (բնակավայրի) վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 26-ից մինչև 50 քառակուսի մետր • ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ:
   2. Համայնքի (բնակավայրի) վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ:
   3. Համայնքի (բնակավայրի) վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ 3900 (երեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:
   4. Համայնքի (բնակավայրի) վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ 3900 (երեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:
5. Համայնքի (բնակավայրերի) վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60.000 (վաթսուն հազար) դրամ:
6. Համայնքի (բնակավայրերի) վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60.000 (վաթսուն հազար) դրամ:
7. Համայնքի (բնակավայրերի) վարչական տարածքում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,Առևտրի և ծառայությունների մասինե ՀՀ օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝ 350 (որոք հարյուր հիսուն) դրամ:
8. Համայնքի (բնակավայրի) վարչական տարածքում առևտրի օբյեկտների՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25.000 (քսանհինգ հազար) դրամ:

9. Համայնքի (բնակավայրի) վարչական տարածքում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50.000 (հիսուն հազար) դրամ:
10. Համայնքի (բնակավայրի) վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս՝ մեկ քառակուսի մետրի համար՝ 500 (հինգ հարյուր) դրամ:
11. Համայնքի (բնակավայրի) տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց՝ 375 (երեք հարյուր յոթանասուն հինգ) դրամ:
12. Համայնքի (բնակավայրի) վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 (հինգ հազար) դրամ:
13. Համայնքի (բնակավայրի) արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար տեղական վճար՝ 1000 (մեկ հազար) դրամ:
14. Գետաշեն համայնքում աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝
    1. բնակելի նշանակության շենքի կամ շինությունների համար փաստացի բնակվող անձերի քանակով՝ մեկ շնչին 50 (հիսուն) դրամ հաշվարկով.
    2. Այլ շենքի կամ շինությունների համար՝ ըստ արտադրվող աղբի ծավալի կամ զանգվածի աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով.

       ա/Առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկամն այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով 1 քմ 20 (քսան)ՀՀ դրամ.

       բ/Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով 1 քմ 5 (հինգ) ՀՀ դրամ

       գ/Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով 1քմ 2 (երկու) ՀՀ դրամ:
15. Սահմանել խմելու ջրի վարձավճար՝ յուրաքանչյուր տան համար ամսական 1000 (մեկ հազար) դրամ:
16. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2018 թ. N 45-Ն

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվային ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գետաշեն համայնքի 2017 թ. դեկտեմբերի 20-ի «Գետաշեն համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

ա) Եկամտային մասում՝ հոդի հարկը նվազեցնել 5794,0 (հինգ միլիոն յոթ հարյուր իննսունչորս հազար) դրամով,

բ) *Ծախսային մասը փոփոխել հետևյալ կերպ՝*

1) 01-1-1 նախահաշվի
   - 4234 հոդվածը նվազեցնել 100.0 (մեկ հարյուր հազար) դրամով,
   - 4241 հոդվածը նվազեցնել 900.0 (ինը հարյուր հազար) դրամով,
   - 4251 հոդվածը նվազեցնել 1000.0 (մեկ միլիոն) դրամով,
   - 4269 հոդվածը նվազեցնել 900.0 (ինը հարյուր հազար) դրամով,
2) 01-6-1 նախահաշվի
   - 4841 հոդվածը նվազեցնել 1500.0 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամով,
3) 06-3-1 նախահաշվի
   - 4251 հոդվածը նվազեցնել 950.0 (ինը հարյուր հիսուն հազար) դրամով,
   - 4269 հոդվածը նվազեցնել 200.0 (երկու հարյուր հազար) դրամով,
   - 4657 հոդվածը ավելացնել 5000.0 (հինգ միլիոն) դրամով,
4) 06-4-1 նախահաշվի
   - 4269 հոդվածը ավելացնել 900.0 (ինը հարյուր հազար) դրամով,
5) 08-1-1 նախահաշվի
   - 4239 հոդվածը նվազեցնել 200.0 (երկու հարյուր հազար) դրամով,
   - 4261 հոդվածը նվազեցնել 300.0 (երեք հարյուր հազար) դրամով,
6) 08-2-1 նախահաշվի
   - 4261 հոդվածը նվազեցնել 200.0 (երկու հարյուր հազար) դրամով,
   - 4269 հոդվածը նվազեցնել 200.0 (երկու հարյուր հազար) դրամով,
7) 08-2-3 նախահաշվի
   - 4212 հոդվածը նվազեցնել 200.0 (երկու հարյուր հազար) դրամով,
   - 4261 հոդվածը նվազեցնել 200.0 (երկու հարյուր հազար) դրամով,
   - 4269 հոդվածը նվազեցնել 400.0 (չորս հարյուր հազար) դրամով,
8) 08-2-4 նախահաշվի
   - 4237 հոդվածը նվազեցնել 200.0 (երկու հարյուր հազար) դրամով,
   - 4267 հոդվածը նվազեցնել 500.0 (հինգ հարյուր հազար) դրամով,
9) 08-2-7 նախահաշվի
   - 4251 հոդվածը նվազեցնել 350.0 (երեք հարյուր հիսուն հազար) դրամով,

10) 10-7-1 նախահաշվի
4729 հոդվածը նվազեցնել 600.0 (վեց հարյուր հազար) դրամով,

11) 11-1-2 նախահաշվի
4891 հոդվածը նվազեցնել 2794,0 (երկու միլիոն յոթ հարյուր իննսունչորս հազար) դրամով,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

	Կողմ ( )	*Դեմ ( )*	*Չեռնպահ ( )*
Վ.Խաչատրյան			
Հ. Դավթյան			
Գ. Կոստանյան			
Ղ. Հովակիմյան			
Մ. Մուրադյան			
Մն. Մուրադյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Հովհաննիսյան

2018 թվականի 23 Նոյեմբերի
գ.Գետաշեն
Ժամը 12:40

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2018թ. *N 46*

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑ-ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հանձնարարել համայնքի ղեկավարին Գետաշեն համայնքի ներքոհիշյալ բնակիչներին տալ ֆինանսական օգնություն սոց-օգնության ֆոնդից 50000 (հիսուն հազար)- ական ՀՀ դրամ՝ Հովհաննիսյան Գայանե Հովհաննեսի, Մաթևոսյան Վրեժ Միհրանի, Աբրահամյան Արմենուհի Համբարձումի, Խաչատրյան Գայանե Գեղամի, Թովմասյան Արտաշես Զավենի, Նաջարյան Մերուժան Խաչիկի, Մուրադյան Քնարիկ Վահանի: Ընդամենը՝ 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

	Կողմ ( )	*Դեմ ( )*	*Ձեռնպահ ( )*
Վ.Խաչատրյան			
Հ. Դավթյան			
Գ. Կոստանյան			
Պ. Հովակիմյան			
Մ. Մուրադյան			
Մն. Մուրադյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Հովհաննիսյան

2018 թվականի 23 Նոյեմբերի

գ.Գետաշեն

Ժամը 12:40